ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02-03

ԲԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/20

ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բերդ

18 նոյեմբերի 2024թ.
ժամը 11:00

Մասնակցում էին ՝
Հանձնաժողովի նախագահ՝ Զ. Ծատուրյանը,
Անդամներ՝ Մ. Բաբայանը, Ա. Մելիքյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Սողոմոնյանը:

1.Տեղեկություն Գնային առաջարկների բացման մասին

(Զ. Ծատուրյան)

Գնային առաջարկները բացվել են հակադարձ աճուրդի ավարտին՝ 12.11.2024թ. ժամը 14:30 -ին eauction **էլեկտրոնային աճուրդի համակարգով:**

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները/անունները/ և գտնվելու վայրի հասցեները, տվյալներ փաթեթները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

2. 1.Գնային առաջարկ կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ, հեռախոսահամարը և e-mail-ը
1.	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	01222567, ք. Երևան, Օհանովի փող. 15/1, 010 744212, natalipharm@bk.ru
2.	«Արֆարմացիա» ՓԲԸ	02505735, 0064, ք. Երևան, Ռաֆֆու 111, (060) 75-99-99 tender@arpharm.am
3.	«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	02823566, ք. Երևան, Աբովյանփ/ 23 094277400, arg.aj@mail.ru

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության,դրանց կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում, ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերն առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.
«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հայտում բացակայում էր լիազորված անձի լիազորագիրը,
«Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ -ի հայտում նշված չէին ապրանքների ֆիրմային անվանումները և արտադրողների անվանումները:

Մասնակիցների կողմից շտկումներն ուղարկվել են սահմանված ժամկետում, հետևաբար նրանց հայտերը գնահատվել են «բավարար»:

Ընդունվել է որոշում 'կողմ՝ 3,դեմ՝0:

4.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը *ԲԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/20* ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացված են կից հավելվածում:

4.1. Գնման գինը գերազանցելու հիմքով մերժվել են հետևյալ հայտերը.
«Նատալի Ֆարմ» ՍՊԸ՝ 11-րդ չափաբաժին,
«Արֆարմացիա» ՓԲԸ՝ 34 -րդ չափաբաժին,
«Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ՝ 2,3,14,15,17,18,21,23,35,40-րդ և 41-րդ չափաբաժիններ:

4.2. Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը/ հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում է /ճիշտ է/:

4.3. Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

5. Ներկայացրած գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

5.1. «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված ԲԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթում ընտրված մասնակից հայտարարել 14,15,20,23,24,25,30,31,33,39-րդ և 40- րդ չափաբաժինների գծով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ- ին, 1,2,3,5,6,7,8,10,13,21,27,28,29,38-րդ և 41-րդ չափաբաժինների գծով՝ «Արֆարմացիա» ՓԲԸ -ին, 9,11,12,16-րդ և 37-րդ չափաբաժինների գծով՝ «Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ:

5.2 17,18, 34-րդ և 35 –րդ չափաբաժինների գծով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, իսկ 4,19,22,26,32-րդ և 36-րդ չափաբաժինների գծով՝ 3-րդ կետի համաձայն:

Հրապարակել չկայացած չափաբաժինների մասին հայտարարությունը:

5.3. Նշված ընկերությունների հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղադրել www.procurement.am կայքում և www.armeps.am համակարգով ուղարկել ընթացակարգի մասնակիցներին՝ անգործության ժամկետը սահմանվում է 10 օրացուցային օր՝ համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. **Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

7. **Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 5.3 կետում նշված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 09:30-ին ք. Բերդ, Ա. Մանուկյան 25 հասցեում:**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ Զ. Ծատուրյան _____

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Բաբայան _____

Ա. Մելիքան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Սողոմոնյան _____